ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 22 -Ա

«ՎԱՐԴԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Ն. Սարգսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2021թ. փետրվարի 2-ից լուծել «Վարդավանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նինել Սարգսյանի հետ 2017 թվականի մարտի 9-ին կնքված N 40 աշխատանքային պայմանագիրը:

2. Լիանա Ասրյանին 2021թ. փետրվարի 2-ից նշանակել «Վարդավանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3.Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Թամար Ստեփանյան	Մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),
Հասմիկ Մնացականյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Մարի Համբարձումյան	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ
Նինել Սարգսյան	« Վարդավանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող

Լիանա Ասրյան «Վարդավանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. փետրվարի 02
ք. Կապան